13. ՕՎ ՍՈՎԴԱՔՅԱ̈ՐԻՆ ՀԱՔՅԱԹԸ

Իլա̈լ ա̈ չիլա̈լ **մին սովդաքյա̈ր**։ էս սովդաքյա̈րիս անումն էլ՝ Օվ սովդաքյա̈ր, հու էլ շատ հարուստ ա իլա̈լ։ Ըստրա էլ շատ ախպերք ա իլալ, ըստահանք էլ մեծ-մեծ չինովնիկնե։ էս Օվ սովդաքյա̈րս մին վախտ աշխատանքի քյինալիս վախտը քյինացալ ա մին չոլ, ընդեղ մին տան վեր եկալ. էս տանս կնեգյն էլ ցավօւմ ա իլա̈լ։ Մին հրեշտակ եկալ ա Օվ սովդաքյա̈րին ասալ. «Վըեր էտ խոխան պիրի, քու աշխատանք օտելու վա»։ էս կնեգյս մին տղա յա պիրալ։ Մին վախտ էս կնեգյը քյինացալ ա Օվ սովդաքյա̈րին ասալ. «էն հրեշտակը քյեզ հինչ ա՞սեց»։ Ասալ ա. «Ասիլ չըմ»։ էն կնեգյը ասալ ա, թա. «Ասիլ պիտիս»։ Նա էլ ասալ ա. «Ասիլ չըմ,. որ ասիլ չըմ»։ Ախըրը ասալ չի։

էս Օվ սովդաքյա̈րը մին օր էն կնգանը ասալ ա. «էտ տղին հինչ տա՞մ»։ Ասալ ա, թա. «Ուրա̈ն քշռունքավը մին փող տո»։ Սա ըստրա քշռունքավը մին փող ա տվալ, եր կալալ քյինացալ մին Օ̄րա̈նա̈ ծմակում տիրա̈լ, ինքյը քյինացալ։

էս Օ̄րա̈նա̈ ծմակումն էլ մին տոն ա իլա̈լ, ըստահանց էլ մին էծ. տահանց տղան էլ աման օր տանում ա իլա̈լ ըըըծըցընում, պիրում։ Տրա կաթնըն էլ կթում ըն իլա̈լ, օտում։ Մին օր էլ տարալ ա, թա ըըըծցնի, էս էծս քյինացալ ա տըեսալ, վըեր մին խոխա վեր տիրած։ էս խոխին ծեծ ա տվալ, ետավ քյինացալ էն մին տըղին կոշտը. էս տղան էլ եր ա կալալ, քյինացալ ո̈ւրա̈ն տոն։ էս կնեգյը պիրալ ա, թա էծին կթի, տըեսալ ա, վըեր ծըծումը կաթնը չի կա, փոնալ ա էս տղին թակալ, թա. «Խե յը՞ս կթալ»։

Էքյսը վրեր տարալ ա թա ըրրծցնի, բուսունը պահալ ա, էս էծը հինչ տեղ վրեր քյինացալ ա, ինքյն էլ հետան մին խիլլա քյինացալ ա։ Էս տղան տրեսալ ա, վրեր հես ա քյինաց ծեծ տվավ. էս տղան եր ա կալալ խոխին, համ էլ էծին՝ քյինացալ ուրանց տոն, ասալ. «Այան, տու ինձ փոնում ես թակում, թա կթալ ես կերալ, ամմա էս խոխին ա իլալ ծեծ տամ»։ Էս կնեգյն էլ խոխին եր ա կալալ, պահալ մեծըցրալ։

Մին օր էս տղան տուս ա եկալ քյուչան, թա հաղ անի։ Տա, մին էլ մին տղա ուրուր նհետ կռև ըն ըրալ, էն մինը ետ ա տառալ թա. «Էծի տղա, շան տղա, էծի տղա, շան տղա»։ Քյինացալ ա էն կնգանը ասալ. «Ա՛յան, էն խե յը՞ն ինձ ասում՝ էծի տղա, շան տղա»։ Նա էլ ետ ա տառալ էն տղին կլխավը անց կացած պանները ասալ։ էն տղան էլ ասալ ա, թա. «Վրեր ես քու տղան չըմ, կիլոխ եր կանեմ, քյինամ»։

Կիլոխ ա եր կալալ, քյինացա՛լ, քյինացա՛լ, մին տան վեր եկալ։ էն տոնն էլ՝ ինքյը վրեր ընդեղ ծնվալ ա, էն ա իլալ։ էս տղան ուրան կլխին անցկացած պանները ըստեղ ասալ ա։ էս տանը կնեգյն էլ ասալ ա, թա. «Տու իմ տղաս ես»։ Ետավ էս տղան էլ ըստեղ կացալ ա։

Մին օր էս Օվ սովդաքյարը եկալ ա ընդեղ հելլա վրեր եկալ, տրեսալ էն տղան ընդեղ։ Ասալ ա. «Տրա ինձ տո, նոքյար պահեմ»։ Նահանք էլ տվալ ըն։

Մին օր էլ մին կյիր ա կյիրալ, տվալ էս տղին, թա. «Տար տո իմ ախպորց», հու մեչին կյիրած ա իլալ, թա. «Քշերավ կյա՝ քշերավ ըսպանեցեքյ կյիր պիրող տղին, քյուսորին կյա՝ քյուսորին ըսպանեցեքյ, ուրուգյունը կյա՝ ուրուգյունը ըսպանեցեքյ»։ Ետավ էս տղան քյինացալ ա մին կյետի ղրաղի վրեր եկալ, քոն իլալ։ Մին հրեշտակ եկալ ա ծոցիցը հանալ, մեչին կյիրածը ճինշալ, ինքյը մեչին կյիրալ, թա. «Քշերավ կյա՝ քշերավ փսակեցեքյ կյիր պիրող տղին, քյուսորին կյա՝ քյուսորին փսակեցեքյ, ուրուգյունը կյա՝ ուրուգյունը փսակեցեքյ»։

Թոխտը հունց վրեր ծալած ա իլալ, նհենց էլ ծալալ ա, տիրալ էն տղին ծոցումը հու հունց ճինշալ ա, վրեր մահլում չիլալ, թա ճինշած ա, թա ճինշած չի. համ էլ Օվ սովդաքյարին ղալամին նման ա իլալ, վրեր ըսկի ճոկվում չիլալ։

Էս տղան եր ա կացալ, քյինացալ էն տոնը, տրեսալ, որ փսակած տիրած ընդեղ։ Ուրան ախպորցը ասալ ա, թա. «Խե յը՞ք փսակալ, ես կյիրալ ըմ թա՝ վրեր վախտ վրեր կյա, ըսպանեցեքյ, ան-

ճախ տուք պիրալ ըք փսակալ։ Ըստահանք պիրալ ըն կյիրաձ կյիրը տիրալ ծերքին, թա. «էս քու կյիրաձ կյիրտ, էտ էլ տուս։ Ասալ ա, թա. «Դե բալքյի հարփաձ ըմ իլալ։ էս Օվ ' սովդաքյարը քյինացալ ա ուրանց հրևան չորաքյլուն ասալ, թա. «Հու վըեր կյա, ծեր թուրունը քցիս։ Ինքյը քյինացալ ուրանց տանը շիպիլկեքյը կրակը լոխ հանգյըցըրալ, ինքյը սոտըսոտ նաչաղացալ, ուրանց դյադնքյը լոխ կրակի յըն քյինացալ, լոխչին էլ քյիցալ ա թուրունը, ուրանց հարսներըն էլ ըն քյինացալ, լոխչին հելլա քիցալ ա թուրունը։

էս Օվ սովդաքյարն էլ ա եր կացալ քյինացալ, ըստրա էլ ա քիցալ թուրունը։ Ետավ մնացալ ըն էս տղան հու ախչիդյը, նստալ ըն էս Օվ սովդաքյարին ապրանքը կերալ։

Աստվածանից իրեք խնձոր վեր ինդյնի. մինն՝ ասողին, մինը՝ լսողին, մինը՝ չլսողին։